ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25» հունվարի 2024թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Հարությունյանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-23-22/8-1» պայմանագրի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից մատակարարման ենթակա ապրանքը, այն է՝ 1000 հատ պաշտպանիչ ակնոցները ընդունելու և ՀՀ պաշտպանության նախարարությանը «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ին 18,000,000 ՀՀ դրամ վերը նշված պայմանագրի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից մատակարարված ապրանքի դիմաց վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

20.12.2023 թվականին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան է մուտքագրվել «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի հայցադիմումը ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-23-22/8-1» պայմանագրի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից մատակարարման ենթակա ապրանքը, այն է՝ 1000 հատ պաշտպանիչ ակնոցները ընդունելու և ՀՀ պաշտպանության նախարարությանը «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ին 18,000,000 ՀՀ դրամ վերը նշված պայմանագրի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից մատակարարված ապրանքի դիմաց վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

21.12.2023 թվականին Հայցվորի անունից ներկայացված հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, հանձնվել է դատավորի աշխատակազմին:

26.12.2023 թվականի դատարանի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

10.01.2024 թվականին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան է մուտքագրվել «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից կրկին ներկայացված հայցադիմումը, որը դատավորի աշխատակազմին է հանձնվել 11.01.2024 թվականին:

16.01.2024 թվականի դատարանի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

19.01.2024 թվականին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան է մուտքագրվել «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կրկին ներկայացված հայցադիմումը ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-23-22/8-1» պայմանագրի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից մատակարարման ենթակա ապրանքը, այն է՝ 1000 հատ պաշտպանիչ ակնոցները ընդունելու և ՀՀ պաշտպանության նախարարությանը «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ին 18,000,000 ՀՀ դրամ վերը նշված պայմանագրի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից մատակարարված ապրանքի դիմաց վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, որը դատավորի աշխատակազմին է հանձնվել 22.01.2024 թվականին:

Հայցվորի կողմից միաժամանակ միջնորդություն է ներկայացվել գործը դատական նիստում քննելու մասին, այն պատճառաբանությամբ, որ դատական նիստի միջոցով ավելի արդյունավետ կիրականացվեն հայցվորի խախտված իրավունքները:

(I) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 121-րդ և 122-րդ հոդվածներով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը, ինչպիսի պայմաններում հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

(II) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հայցադիմումը ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից պահանջել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-22/8» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

(III) Նկատի ունենալով նաև, որ ներկայացված հայցադիմումում հայցվորի կողմից միաժամանակ միջնորդություն է ներկայացվել գործը դատական նիստում քննելու մասին, ուստի սույն որոշմամբ պետք է լուծել նաև գործը դատական նիստում քննելու հարցը:

(IV) Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ և 211-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-23-22/8-1» պայմանագրի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից մատակարարման ենթակա ապրանքը, այն է՝ 1000 հատ պաշտպանիչ ակնոցները ընդունելու և ՀՀ պաշտպանության նախարարությանը «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ին 18,000,000 ՀՀ դրամ վերը նշված պայմանագրի շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի կողմից մատակարարված ապրանքի դիմաց վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2024 թվականի մարտի 1-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից պահանջել «ԳՀԱՊՁԲ-23-22/8-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Թիվ ԵԴ2/44237/02/23 քաղաքացիական գործով նշանակել դատական նիստ՝ **2024 թվականի փետրվարի 9-ին ժամը 15:00-ին** (հասցե՝ ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10, դահլիճ թիվ 1):

4. Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրենքով սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:

6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

7. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**